ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Տեխնիկական աջակցություն «Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների համար» բյուջետային աջակցության ծրագրին

Իրականացման ժամանակահատված: 01.10.2021 - 30.09.2023

ԱԼԳ երկրներ:

Armenia

ԵՄ ներդրում: € 1 388 750

Ընդհանուր բյուջե: € 1 388 750

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Ecorys in partnership with PAI and Axiom International

Նախագծի նկարագրություն:

Սույն Տեխնիկական աջակցության (ՏԱ) ծրագիրը հանդիսանում է Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին ուղղված ընթացիկ ԵՄ բյուջետային աջակցության ծրագրի լրացուցիչ մի մասը:

Ծրագրի բաղադրիչները նպատակ ունեն աջակցել արդարադատության և հակակոռուպցիոն ոլորտների ռազմավարությունների իրականացմանը՝ բարելավելու ինստիտուցիոնալ գործառնական կարողությունները, արդյունավետությունը, թափանցիկությունը և դատական համակարգի նկատմամբ հանրային վստահությունը: Այս ծրագրի գործողությունները ուղղված կլինեն կառավարչական և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը լայն իմաստով, ներառյալ ոլորտային և դոնորների համակարգումը, ՊՖԿ բյուջեի կառավարումը և ներքին վերահսկողությունը), ծրագրերի և նախագծերի մշակումը, մշտադիտարկումն ու գնահատումը, բյուջետային աջակցության կառավարումը և հաղորդակցության/հանրային իրազեկումը:
Ծրագրի երեք բաղադրիչները նկարագրված են ստորև.
- Առաջին բաղադրիչի շրջանակներում աջակցություն կտրամադրվի քաղաքականության մշակմանը, ինստիտուցիոնալ և կառավարման կարողություններին և ներգրավված հաստատություններում մարդկային ռեսուրսների քաղաքականության և ռազմավարությունների մշակմանը: Այս բաղադրիչը ներառում է նաև ՊՖԿ կարողությունների և ներքին վերահսկողության համակարգերի զարգացումը, ինչպես նաև դոնորների հետ հարաբերությունները և բյուջետային աջակցության ծրագրերը կառավարելու կարողությունները:

Ակնկալվող արդյունքներ:

1. Ամրապնդել Արդարադատության նախարարության (ԱՆ), ԲԴԽ, ՀԴ, ԿԿՀ և ԳԴ ՄՀՎ, և համապատասխան հիմնական շահագրգիռ կողմերի (մասնավորապես՝ նորաստեղծ մարմինների) ընդհանուր կառավարման, ՊՖԿ և մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունները:
2. Ընդլայնել պլանավորումը, համակարգումը և մշտադիտարկումը, ներառյալ ԱՆ, ԲԴԽ, ՀԴ, ԿԿՀ, ԳԴ ՄՀՎ և համապատասխան հիմնական շահագրգիռ կողմերի վիճակագրական հաշվետվությունների կարողությունների զարգացումը՝ դատական և հակակոռուպցիոն ռազմավարությունների իրականացման և արդյունքների մասին զեկուցելու համար: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու արդարադատության ոլորտում տվյալների հավաքագրման մեխանիզմների գնահատմանը և կատարելագործմանը՝ ապացույցների վրա հիմնված ավելի լավ քաղաքականության մշակման և ճշգրիտ մշտադիտարկման և հաշվետվողականության համար:
3. Ամրապնդել ԱՆ և համապատասխան հիմնական շահագրգիռ կողմերի հաղորդակցման և խորհրդատվական կարողությունները (հանրային իրազեկումը) ՝ բարեփոխումների արդյունքները ռազմավարական կերպով փոխանցելու շահագրգիռ կողմերին, լրատվամիջոցներին և լայն հանրությանը: